



Հայաստանի Երիտասարդ
իրավաբանների ասոցիացիա



Եվրոպայում անվտանգության և
համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ

ԵԱՀԿ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ԶԵԿՈՒՅՑ

**«Հանրային վերահսկողություն և թափանցիկության ապահովում» ծրագրի
շրջանակներում ՀՀ նոտարական գրասենյակներում իրականացված
հասարակական մոնիթորինգի արդյունքները**

ՆՈՅԵՄԲԵՐ 2013

ՆԱԽԱԲԱՆ 3

1. *ՀՀ նոտարական գրասենյակների դիտարկում*

 1.1 *Նոտարական ծառայությունների մատուցման որակի հիմնահիմունքներ*.....5

 1.2 *Արձանագրված խախտումներ*.....12

2. *Եզրակացություն* 18

3. *Օրենսդրության վերլուծություն և ամփոփ առաջարկություններ*
..... 20

ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ պետական կառավարման համակարգի նկատմամբ հասարակական վերահսկողության իրականացումը կարևոր է ոչ միայն կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման տեսակետից, այլ նաև այդ համակարգի գործառնական արդյունավետությունը բարձրացնելու առումով: Պետական կառավարման համակարգի պարբերական հասարակական մոնիթորինգն արդյունավետ մեխանիզմ է: Մոնիթորինգի մեխանիզմի միջոցով հնարավոր է բարելավել պետական պաշտոնյաների շրջանում ձևավորված բարոյական մթնոլորտը, նպաստել նրանց ֆունկցիոնալ կարողությունների մեծացման գործին, հասնել պարտականությունների պատշաճ կատարմանը:

Պետությունը կոռուպցիայի դեմ պայքարում պետք է կիրառի արդյունավետ, համակարգված քաղաքականություն, որպիսիք կարող են ծառայել՝ կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային գործիքները, այդ թվում՝ «Կոռուպցիայի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայի, որին Հայաստանը միացավ 2007 թվականի ապրիլի 7-ին: «Կոռուպցիայի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայի իմաստով **«պաշտոնատար անձ»** հասկանում ենք նաև «... ii) պետական գործառույթ իրականացնող ցանկացած այլ անձ, այդ թվում՝ պետական գերատեսչության կամ պետական ձեռնարկության համար, կամ որևէ **հանրային ծառայություն մատուցող**, ինչպես դա սահմանված է Մասնակից պետության ներքին օրենսդրությամբ, և ինչպես դա կիրառվում է այդ Մասնակից պետության իրավական կարգավորման համապատասխան բնագավառում. iii) որևէ այլ անձ, որը Մասնակից պետության ներքին օրենսդրությամբ սահմանվում է որպես «պաշտոնատար անձ»: Այնուամենայնիվ, սույն Կոնվենցիայի II գլխով նախատեսված որոշակի միջոցների նպատակով **«պաշտոնատար անձ»**-ը կարող է նշանակել ցանկացած անձ, որն իրականացնում է որևէ պետական գործառույթ կամ մատուցում է որևէ **հանրային ծառայություն**, ինչպես դա սահմանված է Մասնակից պետության ներքին օրենսդրությամբ, և ինչպես դա կիրառվում է տվյալ Մասնակից պետության իրավական կարգավորման համապատասխան բնագավառում»: Ուստի, այս տեսանկյունից անհրաժեշտ է ընդգծել կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման կարևորությունը՝ նոտարական ծառայությունների մատուցման ոլորտում:

Անդրադառնալով քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, պետք է նշել, որ մեծ է նրանց դերը նաև ՀՀ նոտարական ծառայությունների բարելավման գործում: Մեր հասարակության երրորդ սեկտորի մասնակցությունը նոտարական ծառայությունների մատուցման համակարգի վերահսկմանը կարող է նպաստել հայ նոտարների բարոյահոգեբանական համապատասխան որակների զարգացմանը, իրենց պարտականությունների կատարման համար անհրաժեշտ հմտությունների ձեռքբերմանը:

Նոտարը որպես պետության անունից հանրային ծառայություններ մատուցող անձ՝ գտնվում է հանրության ուշադրության կենտրոնում: Ուստի շատ կարևոր է ՀՀ նոտարների կողմից ՀՀ քաղաքացիներին տրամադրվող ծառայությունների որակի պարբերական մոնիթորինգը: Այդ պատճառով էլ Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի (այսուհետ ՀԵԻԱ) մոնիթորինգային միավորի անդամներից բաղկացած դիտորդական խումբը նոտարական գրասենյակներում իրականացրել է հերթական ընտրանքային հետազոտությունը: Ծրագիրը իրականացվել է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ և համապատասխան պետական մարմինների ու պաշտոնատար անձանց հետ սերտ համագործակցության արդյունքում: Այն հանդիսանում է նախորդ նման ծրագրի շարունակությունը¹:

Մոնիթորինգի մեխանիզմի նպատակադրված օգտագործումը նախորդ հետազոտության ժամանակ հնարավորություն է տվել համապատասխան առաջարկներ ներկայացնել ոլորտի իրավասու մարմիններին: Ուստի և խնդիր էր դրված պարզել, թե այդ մարմինների միջամտության արդյունքում ինչպիսի՞ փոփոխություններ են արձանագրվել համակարգի գործառնության մեջ, և արդյո՞ք առկա է նոտարական ծառայությունների մատուցման համակարգի վիճակի բարելավում:

¹ «ՀՀ նոտարական գրասենյակների բազմակողմանի մոնիթորինգ» ծրագրի առաջին փուլը մեկնարկվել էր 2009թ.-ի օգոստոսի 18-ին և ավարտվել նույն թվականի սեպտեմբերի 15-ին: Այն իրականացվել է հասարակական կազմակերպությունների մոնիթորինգային ցանցի դիտորդների կողմից: Իսկ ծրագրի նախորդ փուլի ընթացքում ՀՀ նոտարական 11 գրասենյակներում դիտորդական առաքելություն է իրականացվել 2011 թ.-ին: Ծրագրի նպատակն էր բացահայտել ՀՀ նոտարական գրասենյակների հասարակական մոնիթորինգի իրականացման միջոցով նոտարական ծառայությունների մատուցման ոլորտում առկա թերությունները, ներկայացնել դրանց վերհանմանն ուղղված համապատասխան առաջարկություններ, նվազեցնել նոտարական ծառայության համակարգում կոռուպցիոն ռիսկերը: Ծրագրի այդ փուլերի ավարտից հետո մշակվել են համապատասխան առաջարկություններ:

Ելնելով վերոգրյալ հարցադրումից 2013 թվականի մայիս ամսից հունիս ամիսն ընկած ժամանակահատվածում իրականացված դիտորդական առաքելության շրջանակներում անցկացվել է նաև սոցիոլոգիական հետազոտություն ստանդարտացված հարցազրույցի մեթոդով այն քաղաքացիների հետ, ովքեր նոտարական ծառայություններից օգտվելուց հետո դուրս էին գալիս նոտարի աշխատասենյակից²: Հարցման արդյունքների վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտել նախորդ և ներկա փուլերի միջև ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած բարելավումների դինամիկան: ՀԵԻԱ-ի մոնիթորինգային միավորի անդամներից բաղկացած դիտորդական խմբի կարողությունների մեծացումը թույլ է տվել ոչ միայն ընդհանուր առմամբ արձանագրել այդ դինամիկան, այլ նաև հավաստի տեղեկատվություն հավաքել առանձին նոտարական տարածքների վերաբերյալ:

Նոտարական ծառայությունների համակարգում ծրագրի իրականացման առաջին և երկրորդ փուլերում լուրջ խախտումներ են արձանագրվել: Այդ պատճառով ընտրանքային համախմբության մեջ ներառվել են հիմնականում այն նոտարական տարածքները, որտեղ դիտորդություն էր կատարվել ծրագրի իրականացման առաջին և երկրորդ փուլերում: Իսկ խախտումների բացակայությամբ առանձնացած նոտարական տարածքները փոխարինվել են: Ընդհանուր առմամբ այս փուլում հարցմանը մասնակցել է 453 քաղաքացի, որոնցից 62%-ը իգական սեռի ներկայացուցիչներ էին, 38%-ը՝ արական սեռի:

ՀՀ նոտարական գրասենյակներում իրականացված հետազոտության արդյունքների զեկույցի նախագիծը քննարկվել է ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ Նոտարական պալատի հետ համատեղ: Զեկույցի վերաբերյալ առաջարկություններ են ներկայացվել ՀՀ արդարադատության նախարարությունը և ՀՀ Նոտարական պալատը, որոնց մի մասը հաշվի են առնվել և ներառվել են սույն զեկույցում, ինչի համար մեր շնորհակալություն ենք հայտնում ՀՀ արդարադատության նախարարությանը և ՀՀ Նոտարական պալատին՝ հանձինս ՀՀ արդարադատության փոխնախարար Արամ Օրբելյանի և ՀՀ Նոտարական պալատի նախագահ Մամիկոն Ասլանյանի:

² Հարցվողների ընտրանքը կազմվել է շրջանային բազմաստիճան ընտրանքի սկզբունքով:

1. ՀՀ ՆՈՏԱՐԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ

1.1 ՆՈՏԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՈՐԱԿԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Մոնիթորինգի ընթացքում պարզվեց, որ ոչ միայն Երևան քաղաքում, այլ նաև մարզերում աշխատող նոտարների մի մասը պարբերաբար ուշացել են աշխատանքից: Օրինակ՝ ինչպես հաղորդում է «Կենտրոն» նոտարական տարածքի գրասենյակում մայիսի 6-ին դիտորդական առաքելություն իրականացրած խմբի անդամներից մեկը. «Նոտարները աշխատանքային ժամից ուշ եկան աշխատանքի (մեկը՝ 09:30-ին, մյուսը՝ 09:40-ին)»: Նույնը կրկնվեց հաջորդ օրը. «Նոտարը եկավ ժամը 9:45, ապա մյուսը նոտարը և նրա օգնականը՝ ժամը 10:00-ին»: Մայիսի 8-ին «գրասենյակը բացվել է առավոտյան վաղ՝ 08:45-ին, սակայն աշխատակազմը ժամանել է աշխատանքային ժամից 30-40 րոպե ուշ»: Այս նոտարական տարածքի տվյալ գրասենյակում նույն վիճակն էր նաև նախորդ հետազոտության ժամանակ:

Մոնիթորինգի ընթացքում դիտորդները աշխատանքային կարգապահության կանոնների նմանատիպ խախտումներ արձանագրել են նաև այլ նոտարական տարածքների գրասենյակներում: «Այսօր նոտարը եկավ ժամը 9.50-ին (Արարատի գրասենյակ 07.05.2013)»: «Նոտարն աշխատանքի ժամանեց ժամը 09:10-ին, իսկ նրա օգնականը աշխատանքի չի եկել: Գործավարության և վարչական մասով պատասխանատուն աշխատանքի եկավ ժամը 11:00-ին: Մյուս նոտարն աշխատանքի ժամանեց 09:50-ին, իսկ նրա օգնականը՝ 09:40-ին (Շենգավիթի գրասենյակ, 07.05.2013)»: «Աշխատողները բոլորը ուշացումով եկան: Գրասենյակը բացեց նոտարի օգնականը 09:40-ին, ով ասաց, որ իրենց աշխատանքային ժամերը սկսվում է ժամը 9:30: Մնացած աշխատողները եկան տարբեր ժամերի՝ նոտարն եկել է 10:10-ին (Կոտայքի գրասենյակ, 13.05.2013)»: «Գրասենյակը բացվել է 09:20-ին (Թալին, 13.05.2013)»: «Արաբկիր» նոտարական գրասենյակը բացվել է 9:00-ին, նոտարները եկել էին ուշացումով՝ 9:10-ին, 9:30-ին և 10:10-ին (13.05.2013)»: «Արաբկիր» նոտարական տարածքում տեղակայված գրասենյակի կապակցությամբ նույնպես պետք է փաստել, որ մոնիթորինգի նախորդ փուլի համեմատ ուշացումների հետ կապված վիճակը չի փոխվել:

Պետք է նշել, որ թեև նոտարական գրասենյակները իրենց աշխատանքները սկսում են ժամը 9.00-ից, այդուհանդերձ կարևոր է ուղղակիորեն նոտարների ներկայությունը՝ գործարքների վավերացման նպատակով: Նոտարական գրասենյակներում կարգապահական նման բացը, երբ նոտարների մեծամասնությունը սահմանված աշխատանքային ժամերը ընդհանուր առմամբ չի պահպանում, թույլ է տալիս եզրակացնել, որ նոտարական ծառայությունների համակարգից գործարքներ կատարելու համար եկած քաղաքացիների դժգոհության պատճառներից մեկն այն է, որ նրանք հաճախ ստիպված են լինում երկար ժամանակ սպասել. «Նոտարի ուշացման պատճառով քաղաքացիները երկար ժամանակ սպասում էին» (դիտորդի զեկույցից, Կենտրոնի նոտարական տարածք, 07.05.2013): Այս տեսանկյունից, նոտարի բացակայության դեպքում, անհրաժեշտ է ապահովել նոտարական գրասենյակի աշխատակիցները ներկայությունը գրասենյակում՝ նոտարական վավերացման ենթակա փաստաթղթերի նախապատրաստական աշխատանքները իրականացնելու համար:

Ինչպես և հետազոտության իրականացման առաջին ու երկրորդ փուլերում, այս անգամ ևս մոնիթորինգը վկայում է, որ նոտարական գրասենյակներ այցելում են բավականաչափ թվով քաղաքացիներ: Նոտարները կատարում էին սեփականության իրավունքի ձեռք բերման, նվիրատվության, կտակների բացման, լիազորագրերի տրամադրման, փաստաթղթերի պատճենների և թարգմանության հաստատման, առք ու վաճառքի, համաձայնագրերի վավերացման և այլ գործարքներ: Հաճախ լինում են նաև հիփոթեքային վարկերի ձևակերպման գործարքներ: Նոտարական տարածքներում հաճախ հերթեր էին գոյանում, ինչն առաջացնում էր հաճախորդների դժգոհությունը: Ըստ դիտորդների, երբեմն «տեղի են ունենում նաև վիճաբանություններ, քանզի հերթերը չեն պահպանվում»: Հերթերը շատ էին հատկապես մինչև ընդմիջումը ընկած ժամանակահատվածում, երբեմն էլ «հերթեր գոյացել են 15.00-ից մինչև 16.20-ը» (դիտորդի զեկույցից, Շենգավիթի նոտարական տարածք, 02.05.2013):

Չնայած հերթերի առկայությանը նոտարական գրասենյակներում, հարցմանը մասնակցած քաղաքացիների ընդամենը 33%-ն է ցանկություն հայտնում նախապես հերթագրվել (մոնիթորինգի նախորդ փուլի ժամանակ այդպես է արտահայտվել հարցվածների 80%-ը): Մյուսները գտնում են, որ դրա կարիքը չկա: Հարցման

մասնակիցները որպես նոտարական գրասենյակներում հերթերի հիմնական պատճառն նշում էին այցելուների մեծ քանակը՝ 49% (նախորդ փուլ - 51%), իսկ հերթագրման բացակայությունը ընդամենը 12%-ն է նշել (նախորդ փուլ - 20%):

Մոնիթորինգի նախորդ փուլերի համեմատ բարելավում կար ցուցանակների և պաստառների հարցում: Միայն Թալինի նոտարական տարածքի գրասենյակում «դրսի պատին չկար նոտարական գրասենյակի մասին որևէ ցուցանակ (դիտորդի զեկույցից, 03.07.2013)»: Արարատի նոտարական տարածքի գրասենյակում վիճակը շտկել են մոնիթորինգի ընթացքում: Եթե մայիսի 3-ին ըստ դիտորդի «սակագների պաստառը սենյակի վերջում՝ սեղանի վրա էր դրված, անհարմար տեղում և ոչ այնքան տեսանելի էր», ապա մայիսի 6-ին արդեն «սակագների պաստառը ավելի էր մոտեցված և քաղաքացիները կարող էին տեսնել այն: Բացի այդ, պատին փակցված էր ՇՊԱԿ-ի (ներկայումս՝ Հակակոռուպցիոն կենտրոն) կողմից պատրաստված ՀՀ Արդարադատության նախարարության Թեժ Գծի հեռախոսահամարը»: Շենգավիթի նոտարական տարածքի գրասենյակում սակագների մասին տեղեկատվական պաստառները բացակայում էին, իսկ «աշխատանքային ժամերի ցուցանակի վրա բացակայում էին ընդմիջման ժամերը» (դիտորդի զեկույցից, 06.05.2013):

Ընդհանուր առմամբ սակագների պաստառների և ցուցանակների հետ առնչվող խնդիրները, որոնք առկա էին նախորդ հետազոտությունների ժամանակ, կարելի է լուծված համարել: Պատահական չէ, որ եթե մոնիթորինգի նախորդ փուլում հարցվածների 69%-ը նշել է, որ տեղեկացված չէ օրենքով սահմանված տուրքի չափերի մասին, ապա հիմա այդպիսիք միայն 39% են կազմել:

Նոտարական գրասենյակների շենքային պայմանները լրացուցիչ դժվարություններ են ստեղծում քաղաքացիների պատշաճ սպասարկման համար: Մոնիթորինգի դիտարկումներից պարզ դարձավ, որ շատ նոտարական գրասենյակներում նախորդ փուլերից հետո ընկած ժամանակահատվածում բարելավվել են շենքային և գույքային պայմանները: Գրանցվել է առաջընթաց նոտարական տարածքների գրասենյակների վերանորոգման հարցում, սակայն որոշ գրասենյակներ դեռ բարեկարգման կարիք ունեն: Օրինակ՝ դիտորդները նշել են Շենգավիթի նոտարական գրասենյակի անմխիթար վիճակի մասին: «Ոչ լիարժեք, առանց վերանորոգման, քանդված պատերով և հատակով, անբավարար նստատեղերով, առանց


օդափոխության համակարգի, գտնվում է 4 հարկանի բնակելի շենքի 1-ին հարկում, փողոցի վրա, խարխլված մուտքի դռնով, առանց տեղեկատվական պաստառների» (դիտորդի զեկույցից, 06.05.2013):

Չհարմարեցված վիճակ է հատկապես մարզային նոտարական գրասենյակներում: Աբովյանում, օրինակ՝ «շատ վատ վիճակում էր գտնվում այն շինությունը, որտեղ գտնվում էր նոտարական գրասենյակը»: Այստեղ «սանդուղքները գտնվում էին անմխիթար վիճակում, ամբողջ շինությունում տարածվում էր զուգարանների գարշահոտությունը», «2 աշխատակից օգտվում են մեկ սեղանից, մեկ աթոռից և մեկ համակարգչից»: Ըստ մյուս դիտորդի, «վարչական տարածքը գտնվում է անմխիթար վիճակում, ընդհանուր միջանցքում, որը նաև հանդիսանում էր սպասասրահ: Էլեկտրական լարերը գտնվում էին բաց վիճակում: Նոտարի աշխատասենյակում չկար սպասասրահ և քաղաքացիները ստիպված կանգնում էին ընդհանուր սրահում, որտեղ քաղաքացիների համար առկա չէին ոչ մի տեսակի հարմարություններ, և քաղաքացիները ստիպված էին կանգած սպասել» (դիտորդի զեկույցից, 15.05.2013): Իսկ Վանաձորում թեև նոտարական տարածքը բարեկարգ է, սակայն բացակայում է պատշաճ սպասասրահ, չկան տեղադրված նստարաններ:

Ինչպես նախկինում, այս փուլում նույնպես չլուծված է մնում նոտարական տարածքները սահմանափակ հնարավորություններով մարդկանց (հաշմանդամների) համար հարմարեցնելու հարցը:

Ստանդարտացված հարցազրույցի արդյունքները վկայում են (տե՛ս Գծապատկեր 1), որ տվյալ նոտարներին առաջին անգամ դիմած քաղաքացիների թիվը նվազել է մինչև 22% (նախորդ հարցման ժամանակ այդ թիվը կազմում էր 38.5% էր):

Գծապատկեր 1. Նոտարի ծառայություններից օգտվելու հաճախականությունը



Ինչպես երևում է գծապատկերից, հարցվածների 22%-ը նշել է, որ հաճախ է օգտվում տվյալ նոտարական գրասենյակի ծառայություններից (նախորդ հարցման ժամանակ այդ թիվը կրկին կազմում էր 22 %), 56%-ը՝ հազվադեպ:

Թեև տարբեր նոտարական գրասենյակներում միևնույն բնույթի նոտարական ծառայությունների դիմաց գանձվող վճարը տարբեր է, քաղաքացիների մեծ մասը մշտապես օգտվում են նույն նոտարական գրասենյակի ծառայություններից: Նրանց մի մասը չգիտի, որ բոլոր նոտարական գրասենյակները կատարում են նույն գործարքները: Սոցիոլոգիական հարցման արդյունքում բացահայտվեց նաև, որ փոքրացել է այն այցելուների թիվը (ռեսպոնդենտների 25%-ը նախորդ փուլի 46%-ի դիմաց), ովքեր տեղյակ չեն, որ նոտարները գույքային պատասխանատվություն են կրում վավերացված գործարքի օրինականության համար: *Հետևաբար, կարող ենք փաստել, որ ներկայումս հասարակությունը ավելի է տեղեկացվում նոտարական համակարգի գործառնության վերաբերյալ, և քաղաքացիները ավելի վստահ են իրենց զգում համակարգի հետ առնչվելիս:* Ուստի պարզ է, թե ինչու հարցվածների 75%-ը պատասխանել է, որ հարկ եղած դեպքում կրկին կդիմի նույն նոտարական գրասենյակ:

Հարցման արդյունքում պարզվել է, որ **ռեսպոնդենտների բավարարվածությունն իրենց տրամադրված նոտարական ծառայություններից կտրուկ աճել է:** Ընդամենը հարցվածների 1%-ը դժգոհեց նոտարի ծառայություններից (մոնիթորինգի նախորդ փուլում այդպիսիք 13% էին կազմում): Հարցմանը մասնակցած քաղաքացիների 72%-ը

լիովին բավարարված է նոտարական գրասենյակներում քաղաքացիների ընդունելության ընթացակարգից (նախորդ հարցման ժամանակ այդ թիվը 38% էր կազմում): Այս առումով վիճակը նոտարական գրասենյակներում էապես բարելավվել է:

Հարցման մասնակիցների 89%-ը վստահ է, որ նոտարներն ունեն մասնագիտական բավարար գիտելիքներ, կատարված նոտարական գործողությունը համապատասխանում էր օրենքի պահանջներին, և իրենք հետագայում վավերացված փաստաթղթերի մասով խնդիրներ չեն ունենա:

Այն քաղաքացիներին, ովքեր երկար ժամանակ միշտ օգտվել են նույն նոտարի ծառայություններից, նոտարները սպասարկում էին ընդգծված բարեհամբյուր ձևով: Այնուամենայնիվ, հարցվածների մի փոքր մասը դժգոհ էր նոտարների անբարյացկամ վերաբերմունքից: *Ռեսպոնդենտների 8%-ը (հարցման նախորդ փուլում՝ 37%-ը) մինչև գործարքը սկսելը նոտարների կողմից չեն իրազեկվել իրենց իրավունքների և գործարքից բխող պարտականությունների վերաբերյալ:*

Հարցմանը մասնակցած քաղաքացիների 12%-ը փաստել է, որ պետական տուրքի վճարման անդորրագիր ներկայացնելուց հետո նոտարները իրենց փաստաթղթերը երկու օրից ավելի ժամանակահատվածում են տրամադրել: Նկատի ունենալով, որ նախորդ հարցման ժամանակ այդպիսիք 34% էին, կարելի է եզրակացնել, որ նոտարական ծառայությունների մատուցման որակի բարելավում է տեղի ունեցել:

Բայց մատուցվող ծառայությունների որակը կախված է նաև այն իրավական մշակույթից, որն ունի քաղաքացին: Նկատի ունենալով մեր քաղաքացիների իրավագիտակցության ցածր մակարդակը՝ հասկանալի է դիտորդների զարմանքը. «Այսօր բավականին հետաքրքիր ու զարմանալի օր էր: Մինչև ընդմիջումը կատարվեց մեկ գործարք, քաղաքացիները կտրուկ հրաժարվեցին հարցերին պատասխանելուց: Աշխատողներից (քաղաքապետարանի) տեղեկացանք, որ ընդմիջմանը մեծ թվով քաղաքացիներ են եղել: Ընդմիջումից հետո, երբ մենք եկանք ներսում գործարք էին կատարում: Այս անգամ էլ նրանք հրաժարվեցին պատասխանելուց: Արդեն 2 օր է, ինչ քաղաքացիները կամ բոլորովին չեն պատասխանում, կամ գումարի չափը չեն ասում» (Արարատ, 08.05. 2013):

Այդուհանդերձ, պետք է նշել, որ քաղաքացիների վերաբերմունքը նոտարական գրասենյակներում իրականացված մոնիթորինգի նկատմամբ ընդհանուր առմամբ


դրական է: Նրանք մոտենում էին դիտորդներին և խնդրում, որ մոնիթորինգը շարունակական լինի: Բայց կային նաև դիտորդներից խուսափող քաղաքացիներ: Օրինակ՝ մայիսի 16-ին Թայլինի նոտարական գրասենյակում դիտորդները արձանագրել են հետևյալը. «Հաճախորդները խուսափում են պատասխանել, թե որքան գումար են վճարում նոտարի ծառայությունների դիմաց»:

Նոտարների վերաբերմունքը հասարակական վերահսկողությանը ընդհանուր առմամբ փոխվել է բացասականից դեպի հանդուրժողական: Նույնը չի կարելի պնդել նոտարների մեքենագրուհիների մասին, ովքեր առաջվա պես հիմնականում բացասական էին վերաբերվում դիտորդությանը: Դրա պատճառն այն է, որ նրանք շատ խախտումներ են անում, ոչ միշտ են տրամադրում անդորրագրեր: Ըստ դիտորդի, «նոտարներն ուղղորդում էին քաղաքացիներն, որպիսի օգտվեն մեքենագրուհիների ծառայություններից: Մեքենագրուհիները թղթերի պատրաստման համար բոլորից 2000 դրամ էին վերցնում և որևէ կտրոն վճարի դիմաց չի տրամադրում»: Իսկ մայիսի 7-ին Կենտրոն նոտարական տարածքում դիտորդություն իրականացրած աշխատակիցը հաղորդել է հետևյալ դեպքի մասին. «Մեքենագրուհիները գործարքների փաստաթղթերը մի քանի անգամ էին պատրաստում իրենց իսկ կողմից թույլ տրված սխալների պատճառով և ցանկացած գործարքի համար 2000 դրամ գումար էին վերցնում, առանց անդորրագիր տրամադրելու»:

Պետք է նշել, որ մեքենագրուհիներին աշխատանքի դիմաց գանձնվող գումարը ներառված է նոտարական վճարի մեջ և հետևաբար չպետք է լրացուցիչ գումարներ գանձվեն քաղաքացիներից: Իսկ մեքենագրուհիների կողմից քաղաքացիներից գումարներ վերցվում են նաև իրենց կատարած այլ տեխնիկական աշխատանքների դիմաց:

Եթե նկատի ունենանք մեքենագրուհիների ծառայություններից օգտվողների քանակը (տե՛ս Գծապատկեր 2), պետք է արձանագրենք, որ այստեղ լուրջ խնդիրներ կան, որոնք տարիներ շարունակ չեն լուծվում:

Գծապատկեր 2. Մեքենագրուհիների ծառայություններից օգտվելու չափը



Գծապատկեր 2-ում ներկայացված հարցման արդյունքները փաստում են, որ հաճախորդների 54%-ը (նախորդ փուլում նրանց թիվը կամգում էր 88%) շարունակում է օգտվել նոտարական գրասենյակներում գործող մեքենագրուհիների ծառայություններից, և այդ մարդկանց 23%-ը դա կատարել է նոտարի ուղղորդմամբ: Հետևաբար, մեքենագրուհիների աշխատանքի հետ կապված բոլոր խախտումների համար պատասխանատու են նաև նոտարները: Քաղաքացիները տեղեկացված չեն, որ մեքենագրուհիների ծառայություններից օգտվելը օրենքի պահանջ չէ:

Մոնիթորինգի ժամանակ արձանագրվել են նաև էթիկայի կանոնների խախտումներ. «Նոտարի օգնականը քաղաքացիների հետ շատ անբարյացկամ էր, իսկ երբ մեզ տեսնում էր միանգամից խոսելու տոնը փոխում էր» (ղիտորդի զեկույցից, Արովյան, 15.05.2013):

1.2 ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽԱՆՏՈՒՄՆԵՐ

Նոտարական գրասենյակներում արձանագրված խախտումները ծառայությունների մատուցման տարբեր բաղադրիչներին են վերաբերվում:

Մկսենք այն բանից, որ ռեսպոնդենտների 27%-ը դժվարացել է պատասխանել այն հարցին, թե արդյոք «նոտարական ծառայությունների դիմաց գանձված պետական տուրքը համապատասխան^օւմ է օրենքով սահմանված պետական տուրքի

դրույքաչափերին» (3%-ը նշել է, որ չի համապատասխանում): Թեև նախորդ փուլում այդպես է պատասխանել ռեսպոնդենտների 48%-ը, այնուամենայնիվ քաղաքացիների իրազեկումը դեռ խնդրահարույց է: Դիտորդը հաղորդում է, որ «նոտարական գործողությունների դիմաց գանձվող վճարները՝ ըստ քաղաքացիների, համապատասխանում էին օրենքով նախատեսված սակագներին, սակայն հարցումների ընթացքում իմանալով գործարքի բնույթը, պարզ էր դառնում, որ նրանք նախատեսվածից ավել են վճարել» (Կենտրոնի նոտարական տարածք, 02.05.2013): Մեկ այլ դիտորդ զեկուցում է, որ «Թարգմանության համար օրենքով նախատեսված է յուրաքանչյուր էջի դիմաց 500 դրամ, իսկ քաղաքացուց 3 էջի դիմաց գանձել էին 3000 դրամ» (Կենտրոն, 02.05):

Այս առումով ուշագրավ են նաև ռեսպոնդենտների պատասխանները այն հարցին, թե որտեղի՞ց են իմացել նոտարական ծառայության դիմաց գանձվող վճարի չափի մասին: Հարցվածների ընդամենը 51%-ն է նշել, որ վճարի չափի մասին տեղեկացել է նոտարական գրասենյակում փակցված սակագների ցուցակից:

Հաճախորդներին հիմնականում նոտարներն են հայտնում, թե ինչ արժեն իրենց ծառայությունները: «Ծառայությունների մատուցման սակագները փակցված էին շատ անհարմար վայրում, որը գրեթե անհասանելի էր քաղաքացիների համար, ինչպես նաև մանր տառերով էր: Իմ կողմից հարցված քաղաքացիները ծառայությունների սակագների մասին տեղյակ չէին և տեղեկանում էին նոտարից» (Շենգավիթի նոտարական տարածք, 06.05. 2013):


Եթե քաղաքացիներից շատերը նույնիսկ չեն էլ մոտենում պատերին փակցված տեղեկություններին, չեն ծանոթանում օրենքով սահմանված սակագներին՝ գերադասելով խորհրդատվություն ստանալ սպասասարահում աշխատող մեքենագրուհիներից, ապա նրանց մոտ առաջանում է ձգտում նոտարներին «շնորհակալություն» հայտնելու, օգտագործելու միջնորդների և ԽՕԲ-ների ոչ ֆորմալ մեխանիզմը և այլն: Նոտարների կողմից օգտագործվում էր այդ հանգամանքը, որն արտահայտվում էր վճարովի պատճենահանման կազմակերպումից մինչև ակնհայտ կոռուպցիոն դրսևորումներով, երբ պահանջված գումարի չափը գերազանցում էր օրենքով թույլատրելի սահմանները: Օրինակ՝ ուշագրավ են հետևյալ դեպքերը կապված դիտորդների կողմից արձանագրված տեղում կանխիկ վճարման հետ. «Լիազորագրի

համար գանձվել է կրկնակի, այն դեպքում, երբ լիազորագիրը տրվում էր 2 օրինակից» (Արարատի նոտարական գրասենյակ, 03.05.2013), «Քաղաքացիները, ովքեր եկել էին գործարքը վավերացնելու համար, մտնում են նոտարի աշխատասենյակ: Վճարումները կատարում էին տեղում՝ նոտարի աշխատասենյակում: Անմիջապես գործարքը վավերացնելուց հետո ... նկատեցի, թե ինչպես տվյալ քաղաքացին գումարը դրեց սեղանին, իբրև շնորհակալություն, քանի որ գործարքի համար նա շուտ էր վճարել» (Արաբկիրի նոտարական գրասենյակ, 14.05.2013): «Նոտարի սենյակում գործարք իրականացնող անձիք վճարումներ էին կատարում, սակայն քաղաքացիների մոտ առկա չէին ՀՂԾ կտրոնները» (Աբովյանի նոտարական գրասենյակ, 15.05.2013):

Ընդհանուր առմամբ հարցման մասնակիցների 44%-ն է նշել, որ կանխիկ վճարումներ է կատարել նոտարական գրասենյակում: Իսկ կանխիկ վճարված գումարների իրավաչափությունը կասկածի տակ են դնում ոչ միայն դիտորդները, այլև հարցմանը մասնակցած քաղաքացիները: Նրանց 3%-ը վստահ է, որ գրանցամատյաններում գրվել են նոտարական ծառայությունների դիմաց իրենց կատարած իրական մուծումներին չհամապատասխանող գումարներ, իսկ 36%-ը պատասխանել է, թե չի նկատել գրանցված գումարի չափը (տե՛ս Գծապատկեր 3): Նախորդ հարցման ժամանակ ռեսպոնդենտների 4%-ն էր գումարի չափի անհամապատասխանության մասին պնդում արել: Ինչպես երևում է, այստեղ լուրջ առաջընթաց չկա:


Քաղաքացիների զգալի մասը դժվարանում է պատասխանել այն հարցին, թե համապատասխանո՞ւմ էր արդյոք, նոտարի կողմից գանձված վճարը օրենսդրությամբ սահմանված վճարի չափին: Սակայն դիտորդները քաղաքացիների հայտնած տվյալների հիման վրա արձանագրել են, որ գործարքների 2%-ի դեպքում գանձվող գումարները չէին համապատասխանում օրենքի պահանջին: Օրինակ՝ Արարատում մայիսի 6-ին դիտորդություն իրականացրած աշխատակիցը վկայում է, որ «Նոտարի բոլոր գործողությունները կատարվում են օրենքի շրջանակներում, բայց պետական տուրքի չափը չի համապատասխանում օրենքով նախատեսված դրույքաչափերին»:

Գծապատկեր 3. Գրանցված և վճարած գումարների չափի համապատասխանությունը



Իհարկե, քաղաքացիների սուբյեկտիվ կարծիքները հիմք չեն նոտարներին այս կամ այն իրավախտախման համար մեղադրելու, բայց երբ նոտարները նույն գործարքի համար տարբեր վճարներ են գանձում, ապա առաջանում են դժգոհություններ և կասկածներ: Ուստի հասկանալի է, թե ինչու մեր ռեսպոնդենտների ընդամենը 21%-ն է գտնում, որ ոչ մի հայ նոտար կոռուպցիոն վարքագիծ չի դրսևորում, կաշառք չի վերցնում , 34%-ը դժվարանում է պատասխանել այդ հարցին, իսկ հարցմանը մասնակցած քաղաքացիների 3%-ը կարծում է, որ բոլոր հայ նոտարները դրսևորում են կոռուպցիոն վարքագիծ, վերցնում են կաշառք (տե՛ս Գծապատկեր 4):

Գծապատկեր 4. Նոտարների մոտ կաշառակերության տարածվածության սուբյեկտիվ ընկալումները



Խախտումների մյուս տեսակին կարելի է դասել սահմանված ընթացակարգային պահանջների անտեսումը: Այս տեսակի խախտումներին կարելի դասել նաև այն դեպքերը, երբ նոտարները մերժում են նոտարական գործին ծանոթանալու քաղաքացիների պահանջի բավարարումը (հարցվածների 25%-ը ներկայացրել է նման պահանջ, 4%-ը ստացել է մերժում), երբ նոտարների օգնականներն էին կնիքով վավերացնում գործարքը (հարցվածների 1%-ը դա է պնդում):


Հարցմանը մասնակցած քաղաքացիների 2%-ը պնդում է, որ գրանցամատյաններում իրենց ինքնությունը հաստատող ներկայացված փաստաթղթերի տվյալները և նոտարական գործողությունները չեն գրանցվել: Մի քանի հոգի խոստովանել են, որ իրենք նոտարին անձը հաստատող ոչ մի փաստաթուղթ չեն ներկայացրել: Այստեղ, իհարկե, կրկին գործ ունենք քաղաքացիների իրավագիտակցության ցածր մակարդակի հետ:

Իրավագիտակցության ցածր մակարդակի վկայությունն է նաև այն հակասությունը, որն առկա էր գործարքի գաղտնիության ապահովման վերաբերյալ նոտարական ծառայություններից օգտված քաղաքացիների պատասխանների և դիտորդների արձանագրածի միջև: Տարբեր նոտարական տարածքներում բավականին շատ էին գաղտնիության սկզբունքի չպահպանման հետ կապված խախտումները:

«Հիմնականում խախտվում էր գործարքների պահպանման գաղտնիության սկզբունքը, քանի որ նոտարը միաժամանակ սպասարկում էր մի քանի քաղաքացիների» (դիտորդի զեկույցից, Արաբկիրի նոտարական գրասենյակ, 14.05.2013), «Այո, ես նկատել եմ, որ նոտարը միանգամից ընդունում է մի քանի քաղաքացի միաժամանակ՝ չապահովելով գաղտնիությունը» (Շենգավիթի նոտարական գրասենյակ, 02.05.2013), «Նոտարի կողմից ևս չէր պահպանվում գործարքի գաղտնիությունը, նրա մոտ նույնպես խմբերով մարդիկ էին մտնում» (Կենտրոնի նոտարական գրասենյակ, 07.05.2013):

Իսկ մեր ռեսպոնդենտների 92%-ը նշել է, որ իրենց գործարքի գաղտնիությունն ապահովված էր (տե՛ս Գծապատկեր 5): Ուշագրավ են այս առումով նաև դիտորդի հետևյալ խոսքերը. «Նոտարական գործողությունների դիմաց գանձվող վճարները՝ ըստ քաղաքացիների, համապատասխանում էին օրենքով նախատեսված սակագներին, սակայն հարցումների ընթացքում իմանալով գործարքի բնույթը, պարզ էր դառնում, որ նրանք նախատեսվածից ավել են վճարել» (Կենտրոնի նոտարական գրասենյակ, 02.05.2013):

Գծապատկեր 5. Նոտարական գործարքների գաղտնիության ապահովվածության գնահատականները



Խախտումները ոչ միայն քաղաքացիների իրավագիտակցության ցածր մակարդակից են առաջանում, այլ նաև գործող նոտարական ծառայությունների

համակարգի թերություններից: Այդ համակարգի մեր ուսումնասիրությունից պարզվում է, որ ինչպես դիտորդն է արձանագրել «ավելի շատ գումար է գանձվում, քան օրենքով է սահմանված»:

Այսպիսով, հիմնական խախտումները, որոնք համակարգային բնույթ ունեն հետևյալն են.

- Հաստատված սակագների և քաղաքացիների մուծած գումարի չափի անհամապատասխանություն,
- Նոտարական ծառայությունների մեջ մտնող մեքենագրական ծառայությունների դիմաց մեքենագրուհիների կողմից քաղաքացիներից լրացուցիչ գումարների գանձում, ինչպես նաև մեքենագրուհիների կողմից տեխնիկական այլ աշխատանքների կատարման դիմաց քաղաքացիներից գանձվող և նոտարական վճարի մեջ չմտնող գումարների վերաբերյալ հավաստող ֆինանսական փաստաթղթերի չտրամադրում:

Արձանագրվածներից առաջինը պայմանավորված է բանկային և/կամ վճարային տերմինալներով իրականացվող վճարումների բացակայությամբ, ինչպես նաև կանխիկ վճարումների դեպքում՝ վճարումն հավաստող ՀԴՄ-ների չտրամադրման հետ:

Արձանագրվածներից երկրորդը պայմանավորված է օրենքով սահմանված ընթացակարգային պահանջների անտեսման արդյունք է: Այս մասին հիմնավորումները ներկայացվել է սույն զեկույցի 3-րդ բաժնում:

2. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կարելի է եզրակացնել, որ մոնիթորինգի առաջին և երկրորդ փուլերի համեմատ այս հետազոտության ժամանակ նոտարական ծառայությունների մատուցման համակարգում արձանագրվել են բարեփոխումներ: Նախ՝ նոտարական գրասենյակները ավելի բարվոք վիճակում են գտնվում, քան նախկինում: Գնացուցակների տեղեկատվական պաստառները փոխվել են, նաև ավելացել են նոր պաստառներ: Սակայն, պետք է ասել նաև, որ գրեթե բոլոր նոտարական գրասենյակների սպասասրահում, իսկ որոշներում էլ՝ նոտարի սենյակում փակցված սակագների մասին քաղվածքում նշված չէ կոնկրետ գումար՝ այս կամ այն նոտարական գործողության կատարման համար, դրա փոխարեն նշված են նվազագույն աշխատավարձի նկատմամբ գործակիցներ, ինչը թյուրիմացությունների տեղիք է տալիս, ուստի առաջարկում ենք կոնկրետ ֆիքսել այս կամ այն նոտարական գործողության կատարման համար գանձվող գումարի չափը:

Սակայն, նոտարական ծառայությունների որակը բարելավելու և տարբեր տեսակի խախտումները կանխարգելելու համար անհրաժեշտ են նոտարական համակարգի համապարփակ բարեփոխումներ: Դեռևս չի հաջողվել ազատվել վճարումների ընթացքում առաջ եկող կոռուպցիոն ռիսկերից: Հետևաբար, նոտարական ծառայությունների համար բանկային փոխանցումների ու վճարային տերմինալիների միջոցով վճարումների կատարումը էականորեն կնպաստի վերը նշված խնդիրների լուծմանը: Բացի այս, այն դեպքում, երբ նոտարի կողմից անմիջականորեն գանձվող կանխիկ գումարների դեպքում հնարավոր է թաքցնել իրական շրջանառության չափը, բանկային փոխանցումների ու վճարային տերմինալիների միջոցով վճարումների կատարման դեպքում՝ այդ ռիսկը չեզոքացվում է: Սակայն քաղաքացիների հարմարավետությունից ելնելով, դեռևս նպատակահարմար է նոտարական ծառայությունների դիմաց քաղաքացիների կողմից նաև կանխիկ վճարումների կատարումը՝ վճարումը հավաստող ՀԴՄ-ների պարտադիր տրամադրման պայմանով:

Անդրադառնալով նոտարական ծառայությունների մեջ մտնող մեքենագրական ծառայությունների դիմաց մեքենագրուհիների կողմից քաղաքացիներից լրացուցիչ գումարների գանձման, ինչպես նաև մեքենագրուհիների կողմից տեխնիկական այլ

աշխատանքների կատարման դիմաց քաղաքացիներից գանձվող և նոտարական վճարի մեջ չմտնող գումարների վերաբերյալ հավաստող ֆինանսական փաստաթղթերի չտրամադրման խնդիրներին, կարծում ենք, որ դրանց լուծմանը կնպաստեն ՀՀ արդարադատության նախարարության և Նոտարական պալատի կողմից այդ հարցերի վերաբերյալ պատշաճ վերահսկողության իրականացումն ու քաղաքացիների իրավական իրազեկության բարձրացմանն ուղղված համապատասխան հանրային իրազեկության քարոզարշավների անցկացումը:

Հայաստանում գործող Լատինական նոտարական համակարգի գործառման արդյունավետությունը մեծապես կախված է ՀՀ կառավարության կողմից իրականացվող կոռուպցիոն ռիսկերի նվազեցման քաղաքականության հաջողությունից: Այդ քաղաքականության շրջանակներում որպես նոտարական ծառայությունների մատուցման համակարգի նկատմամբ հասարակական վերահսկողության արդյունավետ միջոց՝ իր ուրույն դերն ունի քաղաքացիական հասարակության կառույցների կողմից պարբերաբար իրականացվող մոնիթորինգները: Մարդկանց կարծիքների ուսումնասիրություններն էլ օգնում են պարզել նոտարական ծառայությունների մատուցման համակարգի հանդեպ ունեցած նրանց վերաբերմունքը, հասկանալ այդ համակարգի հիմնախնդիրները:

3. ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ

ԱՄՓՈՓ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես արդեն նշել ենք, նոտարական գրասենյակներում նախկինում ևս երկու փուլով իրականացվել են համապատասխան ուսումնասիրություններ, որոնց ընթացքում ևս ուսումնասիրվել է ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը և վեր են հանվել համապատասխան խնդիրներ ու ներկայացվել ամփոփ առաջարկություններ:

Մեր կողմից իրականացված սույն դիտարկման արդյունքում պարզ դարձավ, որ նշված խնդիրների մի մասը լուծում է ստացել, և ոլորտում նկատելի է որոշակի առաջընթաց, բայց և այնպես կան դեռ օրենսդրական և համակարգային բացեր, որոնք կարգավորման կաիրք ունեն:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.

1.1 Նոտարի պաշտոնում նշանակելը և վերահսկողությունը նոտարի գործունեության նկատմամբ

Նախ նշենք, որ թեև նոտարը համարվում է հանրային ծառայություններ մատուցող անձ և ըստ էության պետք է անկախ լինի պետական մարմիններից, բայց և այնպես ակնհայտ է պետության դերն այն ոլորտում: Մասնավորապես, նոտարների որակավորման քննական հանձնաժողովի կազմը հաստատում է արդարադատության նախարարը, որակավորման անցկացման համար անհրաժեշտ հարցերը մշակվում են նախարարության կողմից և վերջապես նոտարի պաշտոնում նշանակումները կատարում է արդարադատության նախարարը:

Բացի այդ, նոտարի գործունեության նկատմամբ վերահսկողությունը ևս իրականացնում է Արդարադատության նախարարությունը, և թեև Նոտարական պալանը ևս իրավասու է նախաձեռնել համապատասխան ստուգումներ, բայց և այնպես նախարարության գերիշխող դերն այս ոլորտում ևս ակնհայտ է:

Այս առումով, կարծում ենք, ճիշտ կլինի, որ նոտարի գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացման հարցում, ՀՀ արդարադատության նախարարության հետ մեկտեղ, մեծ դերակատարում վերապահել նաև ՀՀ Նոտարական պալատին:

Թույլ են նաև հասարակական վերահսկողության մեխանիզմները, ինչը ևս չի ապահովում համակարգի հասարակական հաշվետվողականությունն ու թափանցիկությունը: Անվիճելի է, որ հասարակական վերահսկողությունը կարևոր մեխանիզմ է նպաստելու նոտարների ֆունկցիոնալ կարողությունների մեծացմանը, հասնելու նրանց կողմից պարտականությունների պատշաճ կատարմանը: Ընդ որում, հասարակական վերահսկողության անհրաժեշտություն են զգում հանրային ծառայություններ մատուցող այլ ոլորտները նույնպես:

Այս առումով մեծ է հասարակական կազմակերպությունների դերը նաև ՀՀ նոտարական ծառայությունների համակարգի գործառնության բարելավման գործում: Մեր հասարակության երրորդ սեկտորի մասնակցությունը նոտարական ծառայությունների մատուցման համակարգի վերահսկմանը կարող է նպաստել հայ նոտարների բարոյահոգեբանական համապատասխան որակների զարգացմանը, իրենց պարտականությունների կատարման համար անհրաժեշտ հմտությունների ձեռքբերմանը:

2.1. Նոտարի գույքային պատասխանատվությունը

Վերանայման կախրք ունի նաև «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին կետը, համաձայն որի՝ *նոտարը գույքային պատասխանատվություն է կրում միայն իր կողմից դիտավորությամբ թույլ տրված խախտումների հետևանքով նոտարական գործողությունների համար դիմած անձանց պատճառված վնասի համար*»:

Կարևորելով քաղաքացու իրավունքների պաշտպանությունը՝ առաջարկում ենք օրենքի վերը նշված դրույթը փոփոխել՝ սահմանելով հետևյալ կերպ. «նոտարը գույքային պատասխանատվություն է կրում իր կողմից թույլ տրված ցանկացած խախտման հետևանքով (անկախ մեղքի ձևից) նոտարական գործողությունների համար դիմած անձանց պատճառված վնասի համար»:

Նոտարի կողմից թույլ տրված ցանկացած խախտման համար գույքային պատասխանատվություն նախատեսելը, կարծում ենք, արդարացված կլինի մի քանի տեսանկյունից: Առաջին՝ նման պայմաններում կմեծանա բանիմաց և գրագետ նոտարների թիվը (մասնագիտական ոչ բավարար գիտելիքներ ունեցող նոտարներ քիչ

կլինեն օբյեկտիվ պատճառներով), և երկրորդ՝ որևէ քաղաքացի նոտարի ոչ բավարար գիտելիքների և այլ սուբյեկտիվ պատճառների հետևանքով վնաս չի կրի, իսկ նման վնաս կրելու դեպքում, կստանա համապատասխան փոխհատուցում:

3.1. Նոտարական գործողությունների սակագները

Անդրադառնալով Կառավարության որոշմամբ սահմանված նոտարական գործողությունների սակագներին՝ պետք է նշել, որ դրանք հնարավոր է առաջացնեն կոռուպցիոն ռիսկեր:

Նախ՝ որոշմամբ սահմանված են վճարի նվազագույն և առավելագույն չափերը, ինչը և տարբերակված մոտեցում ցուցաբերելու և կամայականություններ դրսևորելու տեղիք է տալիս:

Մինևույն նոտարական գործողության համար պրակտիկայում տարբեր նոտարներ սահմանում են տարբեր գներ, և ստացվում է, որ առանց որևէ պատճառաբանության նոտարը կարող է քաղաքացուց պահանջել որոշմամբ սահմանված առավելագույն գումարը: Ինչպես և նախկինում, այժմ նույնպես ՀԵԻԱ-ն առաջարկում է վերանայել նոտարական սակագները, և սահմանել մատուցվող ծառայությունների դիմաց հստակ դրույքաչափեր, ընդ որում՝ վճարի նվազագույն և առավելագույն չափերի միջև ինտերվալը պետք է լինի ողջամտորեն կրճատված և հնարավորինս ֆիքսված:

Բացի այդ, նոտարական գրասենյակներում փակցված նույն որոշման համապատասխան քաղվածքը ևս քաղաքացիների համար ոչ հասկանալի է:

Որպես նոտարների կողմից կատարվող օրենքի պահանջի խախտում՝ պետք է նշել նաև այն, որ գործնականում նոտարներն իրենց կողմից գանձված գումարների վճարման փաստը հավաստող փաստաթղթեր չեն տրամադրում, եթե քաղաքացին չի պահանջում այն:

Նոտարները, քաղաքացուն չեն տրամադրում վճարումը հավաստող որևէ փաստաթուղթ, դրանով հնարավորություն է ստեղծվում թաքցնել իրական շրջանառությունը:

Պետք է նշել, սակայն, որ նոտարական գրասենյակներում իրականացված նախորդ մոնիթորինգների ընթացքում ներկայացված օրենսդրական առաջարկությունները որոշակիորեն հաշվի են առնվել նոտարական գործողությունների սակագների մասին Կառավորության նոր որոշման ընդունման ժամանակ:

Մասնավորապես, նախորդ մոնիթորինգների արդյունքում կազմված զեկույցում առաջարկվել էր առանձնապես բարդ գործարքների վավերացման դեպքում գանձել հավելավճար, իսկ օրենսդրությամբ հստակ ամրագրել առանձնապես բարդ գործարքների հատկանիշները:

Առաջարկն այնքանով էր հիմնավորված, որ սակագների մասին կառավարության նախորդ՝ 2002թ. ապրիլի 25-ի թիվ 919 որոշումը «հնարավորություն էր տալիս» նոտարին իր հայեցողությամբ այս կամ այն գործարքը որակել բարդ (բարդ գործարքի հատկանիշները որոշմամբ սահմանված չէին) և գանձել մինչև 20 000 ՀՀ դրամ գումար:

Կառավարության նոր՝ 2011թ. մայիսի 26-ի թիվ 733-Ն որոշմամբ, հաշվի առնվելով նաև ներկայացված առաջարկությունները, վերացվել է առանձնապես բարձ գործարք հասկացությունը:

Առաջարկվել էր նաև այն գործարքների դիմաց, որոնք ենթակա են գնահատման, գանձվող վճար սահմանել գործարքի գնի որոշակի տոկոսը՝ համապատասխան տոկոսադրույքն ամրագրելով օրենսդրությամբ:

Կարծում ենք, նշված օրենսդրական բարեփոխմամբ առավել կնվազեն կոռուպցիոն ռիսկերը:

Առաջարկում ենք սահմանել ֆիքսված գումար այն նոտարական գործողությունների համար, որոնք ենթակա չեն գնահատման:

Առաջարկում ենք նաև նոտարական ծառայությունների համար նախատեսված վճարի գումարները վերանայել և համաչափ դարձնել նոտարի կողմից կատարվող գործարքի արժեքին՝ հաշվի առնելով որոշ բացառություններ սոցիալական տարբեր խմբերի համար: Այս տեսանկյունից կարևոր է նաև նոտարական սխալի ապահովագրության ինստիտուտի բարեփոխումներն ու զարգացումները:

Վճարման եղանակը. հստակ կարգավորման կարիք ունի նաև նոտարական գործողության դիմաց կատարվող վճարման եղանակը:

Կոռուպցիոն ռիսկերից խուսափելու համար օրենսդրորեն պետք է ամրագրել, որ նոտարական գործողությունների դիմաց վճարումները կատարվում են բանկային եղանակով կամ վճարային տերմինալների միջոցով: Այս խնդրի լուծման համար նոտարական գրասենյակներում կարող են տեղադրվել վճարային տերմինալներ: Սակայն քաղաքացիների հարմարավետությունից ելնելով, դեռևս նպատակահարմար է նոտարական ծառայությունների դիմաց քաղաքացիների կողմից նաև կանխիկ վճարումների կատարումը՝ վճարումը հավաստող ՀԴՄ-ների պարտադիր տրամադրման պայմանով:

4.1. Նոտարական պալատի դերը

Նոտարական պալատը՝ որպես նոտարների պարտադիր անդամության վրա հիմնված նոտարների մասնագիտական ոչ առևտրային կազմակերպություն, պետք է օրենսդրությամբ օժտված լինի ավելի լայն իրավասություններով, քան իրականում է օժտված:

Նոտարի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցում արդարադատության նախարարը՝ իր նախաձեռնությամբ կամ նոտարական պալատի առաջարկով, ինչպես նաև նոտարական պալատը՝ իր նախաձեռնությամբ՝ նոտարի կողմից նոտարական գործողություններ իրականացնելիս օրենքի կամ իրավական այլ ակտի խախտում թույլ տալու կամ օրենքով չնախատեսված դեպքերում իր նոտարական տարածքից դուրս նոտարական գրասենյակ բացելու դեպքերում:

Առաջարկում ենք, հստակեցնել ՀՀ Արդարադատության նախարարության և ՀՀ Նոտարական պալատի կողմից կարգապահական վարույթի հարուցման ընթացակարգերը, հստակեցնել վարույթի հարուցման դեպքում ՀՀ Արդարադատության նախարարության և Նոտարական պալատի իրավասությունները, ինչպես նաև երկու մարմիններին հնարավորություն ընձեռել կարգապահական պատասխանատվության ենթարկելու նոտարին:

Բացի այդ, նոտարների որակավորման քննական հանձնաժողովի կազմի հաստատումը, որակավորման անցկացման համար անհրաժեշտ հարցերի մշակումը, նոտարի պաշտոնում նշանակումների կատարումը իրականացվի ՀՀ Արդարադատության նախարարության և ՀՀ Նոտարական պալատի կողմից համատեղ:

5.1. Նոտարական գործողությունները և դրանց իրականացման ընդհանուր պայմանները

Նոտարական գործողությունների իրականացնելիս նոտարին օժանդակում են նոտարական գրասենյակի աշխատակիցները՝ նոտարի օգնականը, ստաժորը, մեքենագրուհիները, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում՝ թարգմանիչները:

- Այս առումով հատկապես օրենսդրորեն հստակեցման կարիք ունեն մեքենագրուհիների և թարգմանիչների գործառույթները: Կատարված ուսումնասիրման համատեքստում խնդիրը պետք է դիտարկել երկու տեսանկյունից: Նախ՝ առկա է խնդիր, երբ մեքենագրուհիները, կատարելով անհրաժեշտ փաստաթղթերի կազմում, որենք մտնում են նոտարական ծառայությունների մեջ, գանձում են հավելյալ գումարներ, և երկրորդ՝ երբ նոտարական գրասենյակներում գործում են նաև տեխնիկական բնույթի ծառայություններ մատուցող անձինք (որպես կանոն նրանք մեքենագրուհիներն են), որոնց կատարած աշխատանքը չի կարող մտնել նոտարական ծառայությունների վճարի մեջ և, փաստորեն, վճարովի է (պատճենահանում, տեքստերի հավաքում և այլն): Այս դեպքում առաջարկում ենք վճարվող գումարի դիմաց քաղաքացուն տրամադրել վճարումը հավաստող փաստաթուղթ (անդորրագիր), ընդ որում՝ օրենսդրորեն ամրագրելով, որ նոտարական գրասենյակներում տեխնիկական բնույթի ծառայություններ մատուցող անձանց կողմից մատուցած ծառայությունների դիմաց վճարում կատարվում է բանկային փոխանցումների և/կամ վճարային տերմինալների միջոցով: Բացի այս, մեքենագրուհիները մատուցում են նաև իրավաբանական խորհրդատվություն՝ չունենալով համապատասխան մասնագիտական գիտելիքներ, որը անթույատրելի է:

Նոտարական գործողության կատարումը մերժելը.

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ նոտարական գործողությունների կատարման մերժման հիմքերի առկայության դեպքում **դիմողի պահանջով** նոտարը կայացնում է մերժման գրավոր որոշում, որում նշվում են մերժման իրավական հիմքերը և բողոքարկման կարգը:

Առաջարկում ենք այս նորմը փոփոխել՝ սահմանելով հետևյալ կերպ. «նոտարական գործողությունների կատարման մերժման հիմքերի առկայության դեպքում, **անկախ դիմողի պահանջից**, նոտարը կայացնում է մերժման գրավոր որոշում, որում նշվում են մերժման իրավական հիմքերը և բողոքարկման կարգը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Ամփոփելով «ՀՀ նոտարական գրասենյակների բազմակողմանի մոնիթորինգ» ծրագրի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքների վերլուծության վերաբերյալ զեկույցը, առաջարկում ենք՝

- Օրենսդրորեն հստակեցնել նոտարի գործունեության նկատմամբ ՀՀ Արդարադատության նախարարության և Նոտարական պալատի կողմից վերահսկողության իրականացման մեխանիզմներն, ընթացակարգերն և իրավասությունները:
- Հստակեցնել նաև ՀՀ Արդարադատության նախարարության և ՀՀ Նոտարական պալատի կողմից կարգապահական վարույթի հարուցման ընթացակարգերը, հստակեցնել վարույթի հարուցման դեպքում ՀՀ Արդարադատության նախարարության և Նոտարական պալատի իրավասությունները, ինչպես նաև երկու մարմիններին հնարավորություն ընձեռել կարգապահական պատասխանատվության ենթարկելու նոտարին:
- Նոտարների որակավորման քննական հանձնաժողովի կազմի հաստատման, որակավորման անցկացման, նոտարների նշանակման, նոտարական տարածքների բաշխման գործընթացները իրականացնել ՀՀ Արդարադատության նախարարության ու Նոտարական պալատի կողմից՝ սահմանելով և/կամ դրանց հստակեցնելով ընթացակարգերը:

- Օրենսդրությամբ ամրագրել, որ նոտարը ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով գույքային պատասխանատվություն է կրում (անկախ մեղքի ձևից) իր կողմից թույլ տրված խախտումների հետևանքով նոտարական գործողությունների համար դիմած անձանց պատճառված վնասի համար:
- Նոտարական ծառայությունների համար նախատեսված վճարի գումարները վերանայել: Այս տեսանկյունից կարևոր է նաև նոտարական սխալի ապահովագրության ինստիտուտի բարեփոխումներն ու զարգացումները:
- Նոտարական գործողությունների համար սահմանել ֆիքսված գումար, եթե գործարքը ենթակա չէ գնահատման, իսկ գնահատման ենթակա գործարքների դիմաց գանձել վճար՝ գործարքի գնի որոշակի տոկոսի չափով:
- Օրենսդրորեն ամրագրել նոտարի կողմից նոտարական գործողության կատարումը մերժելու մասին գրավոր պատասխան տրամադրելու պարտականություն՝ անկախ քաղաքացու պահանջից:
- Կարգավորել նոտարական գործողության դիմաց կատարվող վճարման եղանակը՝ սահմանելով, որ վճարումները պետք է կատարվեն բանկային կամ վճարային տերմինալների եղանակով՝ բանկային հաշվեհամարին փոխանցում կատարելու միջոցով: Այս նպատակով կարելի է նոտարական գրասենյակներում տեղադրել վճարումն ապահովող տերմինալներ: Սակայն քաղաքացիների հարմարավետությունից ելնելով, դեռևս նպատակահարմար է նոտարական ծառայությունների դիմաց քաղաքացիների կողմից նաև կանխիկ վճարումների կատարումը՝ վճարումը հավաստող ՀԴՄ-ների պարտադիր տրամադրման պայմանով:
- Պատշաճ հսկողություն իրականացնել նոտարների կողմից վճարումը հավաստող փաստաթղթերի տրամադրման օրենքի պահանջի կատարման նկատմամբ:
- Օրենքով սահմանել վավերացված փաստաթղթերի վրա փաստացի գանձված պետական տուրքի և ծառայության վճարի չափը նշելու նոտարի պարտականությունը:

- Նոտարի գրասենյակից բացակայության դեպքում ապահովել նոտարի օգնականի և/կամ ստաժորի ներկայությունը գրասենյակում՝ քաղաքացիների ընդունելության և գործարքների ու իրավաբանական բովանդակություն ունեցող այլ փաստաթղթերի նախագծերի կազմման նախապատրաստական աշխատանքներն իրականացնելու համար: